ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2024թ. № **104-Ա**

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 32/1 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՄԵԼԱՆՅԱ ՍԱՄՎԵԼԻ ԽՈՅԵՑՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0501-0019 կադաստրային ծածկագրով 0,00204 հեկտար մակերեսով հողամասը Սպիտակի քաղաքապետի 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ 28 որոշմամբ ավտոտնակ կառուցելու նպատակով վարձակալությամբ, 15 տարի ժամկետով հատկացվել է Ժորա Սողոմոնի Պողոսյանին, ով 2008 թվականին կառուցել է 14,78 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակ: Հաշվի առնելով, որ Ժորա Սողոմի Պողոսյանի մահից հետո 2013 թվականի փետրվարի 19-ի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում թիվ 369) ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքը ժառանգել են նրա կինը՝ Մելանյա Սամվելի Խոյեցյանը և որդին՝ Արայիկ Ժորայի Պողոսյանը, որը ստացել է պետական գրանցում՝ 2017 թվականի օգոստոսի 23-ին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23082017-06-0016 վկայական), կառուցապատման իրավունքի ժամկետն ավարտվել է 2022 թվականի փետրվարի 22-ին, հիմք ընդունելով Մելանյա Սամվելի Խոյեցյանի 2022 թվականի մայիսի 5-ի դիմումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062024-06-0080 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062024-06-0080 վկայականը), «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան փողոց 32/1 ավտոտնակ» հասցեում գտնվող 06-006-0501-0019 կադաստրային ծածկագրով 0,00204 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա գտնվող 14,78 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրել Մելանյա Սամվելի Խոյեցյանին:

2. Վարձավճարի չափ սահմանել տարեկան 7000 ՀՀ դրամ:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 8
ք. Սպիտակ